

Սարգիս կը խաղաղօրէն ժողովուրդը եւ կը վերահաստատէ զԿոլոտ ի Պատրիարքութեան ընդդէմ Պետրոս Բիւթիւր Վ.ի:

Յոյնք կ'աշխատէին երուսաղեմի Ս. Յակոբայ վանքը Հայոց ձեռքէն առնուլ. Կոլոտ եւ Գրիգոր Շղթայակիր Պատրիարքները ("Սիօն" երզմ. 1866), Յակոբ Նալեան եւ Սարգիս՝ գործակցութեամբ իշխանաց յաջողեցան Յոյները ետ մղել: Նոյն միջոցին (1737) Կ. Պոլսոյ ժողովուրդներէն ոմանք Կոլոտը Պատրիարքութենէ հանել կը ջանային, ըսելով թէ Կոլոտ քաղկեդոնիկներն (ուղղափառները) եւ Ս. Լեւոնը չէր նշովեր եւ անոնց հետեւող Հայերը չէր հալածեր: Մինչեւ իսկ եկեղեցւոյ մէջ անոր վրայ յարձակեցան սուսերօք եւ բրօք, եւ կ'ուզէին զինքն սպաննել՝ "վասն ճանաչելոյնորին զճճմարտութիւն եւ հետեւելոյն նմա" ("Յիշատակարան" էջ 189): Ուզեցին զինքն հեռացնել եւ տեղը դնել Պետրոս Քիւթիւրը, որ յետոյ Ծահկեցի Ղազար Կաթողիկոսին ալ հակառակորդն եղաւ: Քիւթիւր ռամիկ ժողովուրդն իր կողմը շահած էր, որոնց մեծամասնութիւնը կը կազմէին Կեսարացի հարուստներ: Պահանջեցին որ Կոլոտ հրաժարի: Կոլոտ վախցաւ, փախաւ եւ հարուստ Ըռաստեանց տունը պահուրտեցաւ: Գրիգոր Շղթայակիր, որ Կ. Պոլիս հիւանդ կը պառկէր, ինքզինքը եկեղեցի տանիլ տուաւ մահճակալի վրայ, եւ քաղցր բանիւ զերինք ետ կեցընելու ջանաց այս ապերախտութենէն ընդդէմ Կոլոտի, եւ սպառնացաւ որ եթէ Կոլոտը հանեն Պատրիարքութենէ, ինքն ալ կը հրաժարի: Ժողո-